ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2015թ. փետրվարի 4 -ին կայացրած նիստի

Նիստի մասնակիցում են հանձնաժողովի 6 անդամներ:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ուղեգիր տրամադրելու խնդրանքով ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց՝

Վայք քաղաքի բնակիչ Գագիկ Սաֆարյանի դիմումը ուղղված ՀՀ Վայոց ձորի մարզպետին՝ պետպատվերի շրջանակներում բուժման համար ուղեգիր ստանալու խնդրանքով:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Ելնելով բժշկական ցուցումներից և նրա ընտանիքի սոցիալապես անապահով վիճակից Վայք քաղաքի բնակիչ Գագիկ Սաֆարյանի բուժումը պետական պատվերի շրջանակներում իրականացնելու համար նախապատրաստել ՀՀ Վայոց ձորի մարզպետի /թիվ 6 / միջնորդագիրն ուղղված ՀՀ *առողջապահության նախարարին:*

Հանձնաժողովի նախագահ Հ.Սարգսյան

Քարտուղար Ց.Բաբայան